

առ զնեղութիւնս և գաշխատութիւնս ինքնին վճարել ըզգործն, զի չունէր օգնութիւն յուստեքէ, այլ յուսացեալ 'ի խնամս Արարչին, յուզի անկեալ չոքաւ յեզիպտոս, և դեգերեալ անդ զամս երիս, 'ի դրունս Իշխանաց և յատեանս Սուլթանին, ծախեաց բազում ինչ, և խոստացաւ ևս տալ հարկս ամ ըստ ամէ, միայն դարձուցեն ինքեան զառաջին վիճակն Հայոց: Իսկ միարանք և ազգն Հայոց, որք կային յերուսաղէմ պաշարեալ 'ի սուգ՝ ողբային զկորուստ վիճակի իւրեանց. թող զձաղանս և զթշնամեանս և զազգի ազգի նախատինս, զոր կրէին 'ի թշնամեաց անտիք թրիտոնեայ անուանելոց: Այսն առնէին եւ անգոսնէին այլազգիք և ասէին՝ կորեաւ ազգն ձեր, բեկաւ զօրութիւն Պատրիարքի և մխարանութեան ձերոյ, յաիշտակեցան տեղիք ձեր, արտաքսեցայք 'ի տաճարէն Ս. Յարութեան, և եղայք նախատինք և այսն կատականաց առաջի ազգաց եւ ազանց, եւ այլ ոոցին նման բանք. իսկ նոքա թախսձեալ 'ի սիրտ և 'ի հոգի տարակուսեալ թափառէին ոյսր անդր, կէսք 'ի ներքս 'ի տաճարի անդ և այլք արտաքս՝ զրկեալ 'ի սովորական պաշտամանց:

Սակայն Մարտիրոս եպիսկոպոս, որ տակաւին դեգերեալ կայր յեզիպտոս, ոչ ինչ կարաց շահիլ 'ի չրջանի երից ամաց, և 'ի վերայ այնչափ ծախուց, յաւել եւս տալ 3000 Փլորիս իրբեւ հարկ արքունի վասն Գողգոթայի, որ դերազանցեր քան զտուրս վրաց, եւ էառ վերստին ըզոսիհական վիճակն իւր հրովարտակաւ, եւ դարձ արար յերուսաղէմ, և 'ի բաց մերժեաց զվիրս 'ի Գողգոթայէ և տիրեաց այնմ, և եղեւ ուրախութիւն մեծ ազգին Հայոց եղելոց անդր: Ահաւասիկ թարգմանութիւն Հրովարտակին, զոր էառ Մարտիրոս 'ի Սուլթանէն, Մէլիք Զահր Սէյֆի Մէհէմէտ կոչեցելոց:

Արդ՝ դարձցի վերստին առ մեծ և փառաւոր եպիսկոպոսն Մարտիրոս, որ է պարծանք քրիստոնէից և Արքեպիսկոպոս ազգին Հայոց Երուսաղէմի և Եզիպտոսի. պահեացէ Տէր Աստուած 'ի փառաւորութեան իւրում: Եւ առ ուխտաւորս և դերիս և մխարանս Հայոց՝ որք բնակին յերուսաղէմ, Գողգոթայն և պահարանք (թերեւս սենեակք նորա) 'ի տաճարին Ս. Յարութեան, մնացէ 'ի ձեռս նոցա,